«Արք մեծահանճարք, յոր ծագս աշխարհի և
» իցէք, այս է ձեր ճակատագիր. վիշտք և զը-
» զուանք և հալածանք, արհամարհութիւն իշխա-
» նաց, հովութիւն սոսկականաց, չարախօսու-
» թիւնք նախանձորդաց կամ որոց նախանձորդս
» ձեզ զանձինս համարիցին, աղքատութիւն և
» վտարանդութիւնք, թերևս և մահ անգամ ան-
» ծանօթ 'ի հեռաւոր օտարութեան 'ի ձերոց
» հայրենեաց. այսոքիկ են ահա բաժինք վիճակի
» ձերոյ։ Եւ զինչ ասեմ. դուցէ արդեօք ձեռն-
» թափ 'ի հրահանգելոյ զմարդիկ լինիցիք։ Ոչ.
» մի այդպէս։ Սակայն թէ և կամիցիք ինչ, միթէ
» ձեռնհաս իցէք 'ի նոյն. միթէ կարող ինչ իցէք
» սանձդնել ձերումդ հանճարոյ, կամ զդէմ ունել
» զահագին թափոյ ուժգնութեանն որով վարէ նա
» զձեզ։ Ո՞չ ապաքէն առ 'ի խոկալ եկեալ է ձեր
» յաշխարհս, ոչ և արեգական 'ի լուսաւորել զաշ-
» խարհ. ոչ ապաքէն և ձերդ շարժումն եկամուտ է
» 'ի ձեզ իբրև զնորայն։ Հապա անսասջիք ձերոցդ օ-
» րինաց, և մի բնաւ եղուկ զանձինս կարդայցէք։
» Զի՞նչ ինչ ազդիցեն թշնամիք ձեր ընդդէմ ճըշ-
» մարտութեան. յաւերժական է նա, և այն ա-
» մենայն անցեալ գնայ։ Ճշմարտութիւնն է վարձ
» վաստակոց ձերոց. նոյն ճարակ հանճարոյ, և
» նոյն զօրավիգն յաշխատութիւնս ձեր։ Բազումք
» իցեն որ յանմտութէ կամ 'ի ցրտութենէ և կամ
» 'ի խուժադուժ բարոյից բերեալք լլկեն զձեզ և
» հալածեն. այլև շատք ևս համախորհուրդք ընդ
» ձեզ դտանին ծագաց 'ի ծագս աշխարհի։ Ցիշեցէք
» առաքինիք, զի և նոքա չարչարակից են ձեզ և
» խորհրդակից. յիշեցէք զի Սոկրատ և Պղատոն
» և նոցին նմանիքն՝ Թէպէտ վաղամեռիկք՝ այլ
» բարեկամք ձեր են, և 'ի դարս որ զկնի՝ կացցեն
» անշուշտ այլք յոլովք որ խելամուտ բանից ձե-
» րոց եղիցին, և ձեզ հանգոյն զամենայնէ խորհես-
» ցին։ Մի ազգ և մի տոհմ էք դուք և համօրէն
» արք աւագք որ եղենն և որ գալոց են։ Ոչ զի
» յայս ինչ վայրի կամ յայն ինչ ժամանակի զետղ
» առեալ դադարիցէք՝ լեալ էք դուք. հապա կեց-
» ջիք սակս ամենայն աշխարհաց և ամենայն ժամա-
» նակաց. ծաւալեսջիք զկեանս ձեր 'ի վերայ կենաց
» ազգի մարդկան. նա և անդր 'ի վեր ևս ամբարձ-
» ջիք զմիտս ձեր. տեսէք զի ըստ պատկերի Ա-
» ստուծոյ կերպարանեալ է հոգիդ ձեր. քաջացա-
» ցուք ապա առաջի Նորին որպէս վայել է ճշմար-
» տութեանն սիրողաց։ Բաբէ. 'ի ձեզ ակնարկէ
» Աստուած, ձեզ անսայ, ընդ ձեզ հաճի, և դուք
» եղուկ անձանց կարդայցէք։ Հանդերձ սովմբ
» եթէ դարձեալ և զմարդկան ինչ խնդրիցէք ըզ-
» վկայութիւն, ահաւասիկ ես ձեզ այնմ երաշխա-
» ւոր. վկայութիւն ասեմ՝ ոչ անզօր ինչ և անյայտ՝
» որպէս այն որ 'ի վաղանցուկ յայս կեանս մեր
» ընծայի, այլ անեղը և անկորուստ ընդ ժամա-
» նակս ձիգս դարուց բաղմաց։ Ցեսէք աւանիկ
» որպէս խաղացեալ գայ մատչի հանդերձեալն
» ազգ, և զայս առ մի մի 'ի ձէնջ արձակէ բար-
» բառ. Սրբեսա զարտասուս քո. իրաւունս առ-
» նել քեզ եկի ես, և վախճան տառապանաց
» քոց. ինև արք մեծահանճարք շնչեն զկենդա-
» նութիւն. ես վրէժխնդիր կացի Կարդեսեայ
» 'ի թշնամեաց անձին նորա, ես զնչխարս նորին
» յապառաժ վիմաց և 'ի ձիւնախաղաղ լերանց
» հանեալ փոխեցի 'ի Փարիզ. ես եմ որ զբանս
» արկուսն կուփահարեմ, և զբռնակալս նկուն
» կացուցանեմ. ես եմ որ խոտան գրեմ զշիրիմս
» կանգնեալս 'ի մէջ տաճարաց 'ի շուք իշխանաց
» աշխարհի, և մեծարեալ պատուեմ զանտաշն
» վէմ որ զնչխարս հանճարեղին ծածկիցէ։ Ցուշ
» լիցի քեզ, զի անմահ է հոգի քո, և անունդ ան-
» մահացի ընդ նմին։ Ժամանակն 'ի փախուստ
» սրանայ, և վայրկեանք զվայրկեանս փոխանա-
» կեն, և սահեալ 'ի բաց գնայ երազ կենցաղոյս։
» Փոքր միւս ևս, և կեցցես դու. և ներեսցես ան-
» իրաւութեանց քոյոյ ժամանակիդ, անգթու-
» թեան հալածչացն քոց, և բնութեանն՝ փոխա-
» նակ զի զքեզ ընտրեաց 'ի հրահանգել և 'ի խրա-
» տել զմարդիկ»։

Առակաւոր խօսք։

ԽՕՍՔ հասկըցողին ալ՝ չհասկըցողին ալ քիչ խօսք բաւական է։ Առակը այնչափ ճշմարիտ է որ վրան երկայն բարակ բացատրութիւն ընելը՝ առակին ալ դէմ կ'ելլայ։ Խելացի մարդը քիչ կը խօսի, մէյմը որ կարճ խօսքով շատ բան կը հասկըցընէ. երկրորդ՝ որ դիմացինը խելացի տեղ կը դնէ. իսկ անխելք մարդը շատ կը խօսի, վասն զի խօսիլ չգիտեր, ու դիմացինը խելացի չսեպեր, հապա զամէն մարդ իրմէ կը չափէ։ Ցկար գլուխ ունեցողը ոչ ինքը ուրիշին կրնայ հասկըցընել իր միտքը, և ոչ ուրիշներուն միտքը կարճ խօսքով կը հասկընայ. գէշն ան է որ շատ անգամ դիմացինին երկայն երկայն խօսքերէն ալ բան չհասկընար։

Արիք ինն՝ «ԻՎԷԻՆԷ» ասղ ՅԷԼԻ.
Ահմաղ բան, փառաւ գ-ուրնա աղ ՅԷԼԻ։